Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ. 33 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում դաստիարակի (0.23 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1)
- 3x4 չափի լուսանկար 1 հատ
- Անձը հաստատող փաստաթուղթ
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն (Ձև 4)
- Այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթղթող:

  Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

  Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. դեկտեմբերի 16-ից մինչև 2026թ. հունվարի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00} –ից մինչև 16^{30}, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

  Մրցույթը տեղի կունենա 2026թ. հունվարի 21 -ին՝ ժամը 13^{00}-ին, «Երևանի հ.33 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Արամ Խաչատրյան 28/1:

  Տեղեկությունների համար զանգահարել 010 22- 64 -57: